

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 5

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2023-2024 ուս. տարվա  
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

27 դեկտեմբերի 2023թ.

**Ներկա էին՝** գիտխորհրդի 20 անդամներից 17-ը (ներկայաթերթիկը կցված է):

**Նախագահ՝** ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

**Գիտական քարտուղար՝** ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար ք.գ.թ. Խաչիկ Սուրիկի Հակոբյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:  
Զեկուցող՝ Ա. Դադայան
2. Ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի մշտադիտարկման արդյունքների քննարկման հարցը: Զեկուցող՝ Հ. Սիմոնյան
3. Ֆարմացիայի ինստիտուտում իրականացվող ավարտական աշխատանքների թեմաների և դեկավարների հաստատման հարցը: Զեկուցող՝ Ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ Տ. Սարգսյան
4. Ընթացիկ հարցեր:

**ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի ժ/պ, ք.գ.թ. Խաչիկ Սուրիկի Հակոբյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:

**Լսեցին՝** Գիտական խորհրդի քարտուղար ք.գ.թ., դոցենտ Անի Դադայանին, ով ներկայացրեց դոցենտի կոչման հավակնորդ Խաչիկ Սուրիկի Հակոբյանի անձնական գործը:

Նա տեղեկացրեց, որ դոցենտի կոչման հավակնորդ Խ.Ս. Հակոբյանի գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից դոցենտի կոչման համար ներկայացվող պահանջներին:

**Ելույթ ունեցան՝** Գիտական խորհրդի նախագահ ք.գ.թ., դոցենտ Աննա Մկրտչյանը, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը և կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Խ.Ս. Հակոբյանը դասախոսություն է կարդում «Դեղաբանություն», «Կլինիկական դեղաբանություն», «Թերապևտիկ դեղաբանություն» և «Ախտաբանական ֆիզիոլոգիա» առարկաներից, ղեկավարում է ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր: Խ. Հակոբյանը հեղինակ է 12 գիտական հոդվածների: Թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո հրատարակել է 4 գիտական հոդված և 1 ուսումնական ձեռնարկ: Ելույթ ունեցողները նշեցին, որ Խ. Հակոբյանը աշխատասեր և պարտաճանաչ անձնավորություն է, լավ մանկավարժ և արժանի է կրելու դոցենտի կոչում:

**Որոշեցին՝** Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ս. Ափոյան, անդամներ՝ ք.գ.թ., դոցենտ Ս. Պետրոսյան և ուսանողուհի Մարիամ Զաքարյան: Ընտրություններից հետո գիտական խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 20 անդամներից 17-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 17 անդամներ: Խաչիկ Սուրիկի Հակոբյանի դոցենտի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 16 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 1 քվեաթերթ: Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և երաշխավորեց Խ.Ս. Հակոբյանին՝ դոցենտի (ԺԵ.00.01- «Դեղագիտություն») կոչում ստանալու գործընթացը սկսելու համար:

2. Ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի մշտադիտարկման արդյունքների քննարկման հարցը:

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ Ա. Մկրտչյանին, ով ներկաներին հաղորդեց, որ իրականացվել է «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի մշտադիտարկում:

**Ելույթ ունեցան՝** «Ֆարմաբիմիայի և ֆարմակոգնոզիայի» ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանը և Ֆարմատեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանը, ովքեր գիտխորհրդի անդամներին մանրամասն ներկայացրեցին «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի մոնիթորինգի արդյունքներն՝ ըստ սահմանված ձևաչափի: Նրանք մասնավորապես շեշտեցին հետևյալը.

1. Ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքները վերլուծված են համակողմանիորեն և յուրաքանչյուր հարցին տրված է բացատրություն:
2. Բազմակողմանիորեն ներկայացված են կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, բերված փաստացի վկայությունները հիմնավոր և համոզիչ են:
3. Կրթական ծրագրի որակի բարելավմանը ուղղված պլանավորված աշխատանքները իրատեսական են: Հատուկ ուշադրության են արժանի Դեղաբանության լաբորատորիայի վերազինման և անվտանգության միջազգային ստանդարտների ներդրման առաջարկները:

Ելույթ ունեցան նաև Խ. Հակոբյանը և «Ֆարմացիա» մասնագիտությամբ բակալավրի IV կուրսի ուսանողուհի՝ Մարիամ Զաքարյանը: Ելույթ ունեցողներն առաջարկեցին հավանության արժանացնել «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի մոնիթորինգի արդյունքները:

**Որոշեցին՝** (միաձայն)

1. Հավանություն տալ «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի մոնիթորինգի արդյունքներին:
2. Սույն որոշումը ներկայացնել ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն:
4. Ֆարմացիայի ինստիտուտում իրականացվող ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ, Կենսաբժշկագիտության ամբիոնի դոցենտ ք.գ.թ.

Տաթևիկ Սարգսյանին, ով հաղորդեց, որ ավարտական աշխատանքների (հեռակա ուսուցմամբ) թեմաները և գիտական ղեկավարները պետք է հաստատվեն գիտական խորհրդի կողմից: Այդ նպատակով հանձնաժողովը հավաքագրել է ինստիտուտի 3 ամբիոններում իրականացվող ավարտական աշխատանքների վերնագրերը և ղեկավարների ցուցակը: Ելույթ ունեցան նաև Ֆարմտեխնոլոգիայի և ՖԵԿ-ի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանը, Ֆարմբիմիայի ամբիոնի վարիչ Հ. Միմոնյանը, ովքեր նշեցին, որ ավարտական աշխատանքներն ընթանում են ըստ ժամանակացույցի, թեմաները քննարկվել և հաստատվել են ամբիոններում:

**Որոշեցին՝** (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի շրջանավարտների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների ներկայացված ցանկը:

## 5. Ընթացիկ հարցեր:

5.1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի ուսանողներին ղեղազործական ընկերությունների կողմից անվանական կրթաթոշակների տրամադրման և ուսման վարձերի փոխհատուցման հարցը:

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյանը, ով նիստին ներկա գտնվողներին հաղորդեց այն մասին, որ Երևանի պետական համալսարանի, «Ազադ ֆարմասյուրիքլը» ՍՊԸ, «Լիկվոր» ՓԲԸ, «Արփիմեդ» ՍՊԸ և «Մաթևոսյան Զարգացման» հիմնադրամի միջև կնքված պայմանագրերի համաձայն սահմանվել է 3 անվանական կրթաթոշակ և 3 ուսանողների ուսման վարձի փոխհատուցում: Համաձայն պայմանագրերի՝ կրթաթոշակը կտրամադրվի մագիստրատուրայի այն ուսանողներին, ովքեր բակալավրի կրթական ծրագիրն ավարտել են բարձր առաջադիմությամբ և կփոխհատուցվեն 11-ից բարձր ՄՈԳ ունեցող, վճարովի հիմունքներով սովորող ուսանողների ուսման վարձերը:

Ա. Մկրտչյանը տեղեկացրեց նաև, որ նշված ընկերությունների հետ քննարկման արդյունքում որոշվել է անվանական կրթաթոշակներ տրամադրել մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողներ Անի Դավթի Խաչատրյանին (Լիկվոր ՓԲԸ), Քրիստինե Հարությունի Առաքելյանին (Ազադ ֆարմասյուրիքլը ՍՊԸ), Արփիմեդ Մեդի Դուկասյանին (Արփիմեդ ՍՊԸ) և 50 %-ի չափով

փոխհատուցել Նարե Վահագնի Սիմոնյանի, Թինա Մուշեղի Բարսեղյանի և Քրիստինե Վարազդատի Հայրապետյանի ուսման վճարները:

**Ելույթ ունեցան՝** գիտխորհրդի անդամներ Ա. Հովհաննիսյանը, Հ. Սիմոնյանը, Ա. Գեոլջանյանը, ովքեր առաջարկեցին հաստատել նշված ուսանողների թեկնածությունները:

**Որոշեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել դեղագործական ընկերությունների կողմից կայացված որոշումը.

1. Ներկայացնել «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Անի Դավթի Խաչատրյանին՝ Ռաֆայել Մաթևոսյանի անվան «Լիկվոր» անվանական կրթաթոշակի:
2. Ներկայացնել «Ֆարմացիա» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Քրիստինե Հարությունի Առաքելյանին՝ Սիհրան Բարոնյանի անվան «Ազադ ֆարմապուրթիքլ» ՍՊԸ անվանական կրթաթոշակի:
3. Ներկայացնել «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Արփինե Մհերի Ղուկասյանին՝ «Արփիմեդ» ՍՊԸ անվանական կրթաթոշակի:
4. Ներկայացնել «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրի ուսանողուհի Նարե Վահագնի Սիմոնյանի և «Ֆարմացիա» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներ Թինա Մուշեղի Բարսեղյանի, Քրիստինե Վարազդատի Հայրապետյանի թեկնածությունները՝ ուսման վարձի 50 %-ի չափով փոխհատուցման համար:

**Գիտական խորհրդի նախագահ՝**  
ք.գ.թ, դոցենտ

**Ա. Մկրտչյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝**  
ք.գ.թ. , դոցենտ

**Ա. Դադայան**